«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>

Դաստիարակ՝ Հրաչուհի Բարեղամյան

Մանկապարտեզ՝ « Ծովագյուղ բնակավայրի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ 5
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 13
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքս կրում է <<Ազգային տոների եւ ծեսերի

կազմակերպման առանձնահատկությունները կրթական
գործընթացում>> վերնագիրը: Թեման ընտրելիս հաշվի
եմ առել թեմայի արդիականությունը:
Թեմայի արդիականությունն այն է, որ հեթանոսական շրջանում ազգային տոների մեծ մասը նվիրված էր աստվածների և բնության տարբեր տարերքների պաշտամունքին:Չնայած որ քրիստոնեության ընդունումով դրանցից շատերը փոխել են իրենց անվանումն ու խորհուրդը,բայց դրանցում գոյություն ունեցող մի շարք սովորույթներ մինչ օրս էլ պահպանել են իրենց արժեքը:Սակայն,ինչպես անցյալում,այնպես էլ այժմ տոներն ունեն նույն գործառույթը' այն է համախմբել մարդկանց տոնի և ծեսի ազգային գաղափարի շուրջ:
Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել:Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ,որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա:Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչև օրս էլ,աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով:Մենք բոլորս այս տոները նշում ենք որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ,սակայն այս տոների մեծ մասը գալիս է նախաքրիստոնեական ժամանակներից:
Ըստ Ֆրեյդենբերգի,տոնն սկզբնական շրջանում եղել է ծիսական արգելքների օր և ոչ հանգստի:

Ազգային տոների,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում բավականին խորն է և բազմակողմանի:Ծեսերի ժամանակ կարևորվում է մանկապարտեզ_ընտանիք համագործակցությունը,քանի որ ներգրավվում է նաև ընտանիքը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին,խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ_ ընտանիք կապը:
Հետազոտական աշխատանքի նպատակն հետևյալն է ' վերածանոթացնել մեր ժողովրդին այն տոներին,որոնք ներդաշնակորեն միաձուլվել էին մեր ժողովրդի կյանքին:Մեր տոնեի ժողովրդական կատարումների զգալի մասը վկայում է , որ ժողովուրդը տոներն ի ցույց է դրել մարդու և բնության ամբողջականությունը,փոխկապվածությունը,միասնականությունը և տարբեր ձևերով միմյանց օգնելու ներդաշնակ կապը:
Առաջին գլուխը նվիրված է ազգային տոների, ծեսերի նկարագրությանը

և կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում,իսկ երկրորդ գլխում կատարվել է հետազոտական աշխատանք:

ԳԼՈՒԽ 1 ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1.1 Ազգային տոների,ծեսերի նկարագրությունը

Ազգային տոնը երկրի կամ ազգի պաշտոնապես նշանակված տոն է, որը, հաճախ կապված է պետականության կամ ինքնիշխանության ձևավորման հետ:Ազգային տոնի օրը նշանակվում է երկրի կամ ազգի կայացման պատմության մեջ առավել կարևոր օրը:Որպես կանոն' ազգային տոնը ոչ աշխատանքային օր է և ուղեկցվում է տոնական միջոցառումներով:
Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով:Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդեսերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլոլ են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը,ապա երկրորդը ծիսակարգն է:Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը:Ըստ Ա.Սարգսյանի' <<Ծիսակարգը խիստ կանոնակարգված է,ամփոփոխ,միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ , ունի զանգվածային բնույթ, այսինքն 'դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր >>: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և' որպես ստեղծագործ, և' որպես գործիչ, և' որպես քննադատ:
Ըստ Ֆրեյդենբերգի, տոնն սկզբնական շրջանում եղել է ծիսական արգելքների օր և ոչ հանգստի: Այս տեսակետի ժշմարտացիության մեջ համոզվելու առիթները շատ են, որոշակի տոնի ժամանակ գործում է արգելքների համալիր.այդ օրը օճառ չօգտագործելու, գլուխ չլվանալու , կրակ չանելու , ճանապարհ չգտնելու, գործ չանելու և այլ արգելքներ, որոնք պահպանվում են առ այսօր:

Ամանոր

Ամանոր (Կաղանդ, Նոր տարի), տոն, նշվում է տարբեր ժողովուրդների կողմից ընդունված օրացույցում ընթացիկ տարվա վերջին օրվա և հաջորդ տարվա առաջին օրվա գիշերը: Նոր տարին նշելու սովորույթը գոյություն ուներ դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում՝ՄիջագետքումԱմանորով նշում են տարվա սկիզբը: Տարին ժամանակի սահմանն է, որը վերցրած է բնությունից: Դա այն ժամանակաշրջանն է,

որի ընթացքում Երկիր մոլորակը կատարում է մի լրիվ պտույտ Արեգակի շուրջը: Երկրի կատարած շրջապտույտը հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ:

Հունվարի 1-ը՝ որպես տարվա սկիզբ, սահմանվել է Հռոմի կայսր Հուլիոս Կեսարի կողմից մ.թ.ա. 46 թվականին: Հին Հռոմում այդ օրը նվիրված էր Յանուսին՝ ընտրության, դռների և բոլոր սկզիբների աստծուն: Հունվար ամիսն իր անվանումը ստացել է հենց Յանուս աստծու անունից, որին պատկերում էին երկու երեսով, որոնցից մեկը նայում էր առաջ, իսկ մյուսը՝ ետ:

Տյառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին ամեն տարի փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրվանից 40 օր հետո, նշում է քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տյառնընդառաջը: Տրնդեզ, Տեառնընդառաջ, Տանդառեջ, Տնդալեշ, Տառինջ-տառինջ, Դառդառանջ, Դոռոնջ, Մելետ և բազմաթիվ այլ անուններով հայտնի տոնը հայ ժողովուրդը նշում է հազարամյակներ շարունակ:

Տոնի պաշտոնական՝ Տյառնընդառաջ անունը բացատրվում է Քրիստոսի կենսագրության այն իրողությամբ, որ հրեական օրենքի համաձայն՝ Փրկչի ծննդյան քառասուներորդ օրը նրա ծնողները՝ Մարիամն ու Հովսեփը, որդուն տաճար տարան:Այստեղ վրան ընդառաջ Եկավ խոր ծերության հասած և տիրոջ գալստյանն սպասող Սիմոն ծերունին, որտեղից և տոնի անունը՝ ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ, Տիրոջն ընդառաջ:

Տոնական հանդիսությունները, սակայն, ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Տյառնընդառաջին վառվող խարույկը գարնան ավետման խորհուրդն ունի: Տարածված էր այն պատկերացումը, որ Տյառնընդառաջի հետ վերջանում է «ձմռան քառասունքը»: Շիրակում Տյառնընդառաջին ասում էին «Մենծ գոլն ընկավ»: Հավատալիք կար, որ «Տըրընդեզի կրակը իր հետ բերում էր օդի բարեխառնություն, հունձքի առատություն, արտերի բերրիություն և ամուսինների օրհնություն»: Ահա այս գաղափարների շուրջն էլ կառուցված էին տոնական արարողությունները:

Տյառնընդառաջի հիմնական ծեսը խարույկ վառելն էր: Որոշ տեղեր խարույկը

վառում էին միայն եկեղեցու բակում, այլ վայրերում՝ բոլոր տների բակերում, երրորդներում՝ միայն նշանված աղջիկների և նորապսակ ունեցող ընտանիքների բակերում: Գերադասելի էր խարույկի համար օգտագործել հատուկ փայտ: Շարուրում գերադասում էին Խաղողենու դյուրավառ փայտը: Սակայն անտառազուրկ վայրերում ծղոտ էլ էին վառում: Խարույկի փայտը կամ այլ վառելիքը բերում էին նշանված ու նորապսակ երիտասարդները, ընդ որում բուն տոնի օրը: Առաջինը, քահանայի օրհնությունից հետո, վառում էին եկեղեցու բակի մեծ խարույկը: Կրակը վառելու պատվավոր իրավունքն այդ տարի ամուսնացած նորափեսաներինն էր. եթե գյուղում նույնիսկ 10 նորափեսա լիներ, բոլորն էլ պետք է մասնակցեին կրակը վառելու արարողությանը, պայմանով, որ յուրաքանչյուրը որևէ ընծա տար եկեղեցուն՝ մեկ ոչխար, մի տիկ գինի, դրամ և այլն: Այս խարույկը հատուկ էր, այն ողջ համայնքի ընթացիկ տարվա կյանքի նախագուշակը պիտի լիներ: Ամբողջ ժողովուրդն այստեղ էր հավաքվում՝ հետները փայտ, նույնիսկ գերաններ բերելով, կրակը թեժացնելով և միմյանց կոչ անելով «ձմեռը վառել»: Հավաքվածներն ուշադիր հետևում էին խարույկի ծխի ուղղությանը, այն ցույց էր տալիս այդ տարվա առավել բերքառատ գոտին: Այս մեծ, գլխավոր խարույկից մասնակիցները խանձողներ էին տանում, որով վառում էին բակերի խարույկները:

Կրակ անհրաժեշտ էր վառել հատկապես նշանված կամ այդ տարի պսակված հարսնացուի կամ հարսի բակում, որոնց սկեսուրները հարսին պետք է «կրակին ցույց տային»: Եթե հարսնացուն դեռևս հոր տանն էր, սկեսուրը Տյառնընդառաջի առավոտյան նրան «փայ» էր ուղարկում, որ սովորաբար բաղկացած էր լինում աղանձից, զանազան ընկուզեղենից, մրգեղենից, չամիչից, շաքարից և որևէ զարդից: Երեկոյան, եկեղեցու կրակից հետո, սկեսուրն իր ազգական կանանց հետ այցելում էր հարսնացուի տուն և ինքն ուղեկցում հարսնացուին կրակի շուրջը պտտվելու, նորահարս ունեցողները հրավիրում էին հարսի ընկերուհիներին:

1.2 Ազգային տոների,ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ուսուցման համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հիմնականում այստեղ է ձևավորվում նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց, շրջապատի և վերջապես գեղեցկության նկատմամբ:

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ , որքան մեսրոպյան այբուբենը ՝ հայոց լեզուն իմանալու համար:
Մենք՝ մանկավարժներս,պարտավոր ենո ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը,այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:
Երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթները, ընտանեկան հանդիսությունները,տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները :Ինչ ծավալի էլ լինի միջոցառումը ,միևնույն է, երեխան կամա թե ակամա դառնում է դրանց մասնակիցն ու դիտորդը:Այդ տպավորություններն աստիճանաբար երեխայի մտապատկերում իմաստավորվում են և դառնում տարրական գիտելիքներ ՝ շրջապատի ճանաչողական համակարգում:
Փորձը ցույց է տալիս,որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական,ընտանեկան,ժողովրդական,ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները:Դրանք սրտամոտ են երեխային,քանի որ նա այս դեպքում դառնում է մասնակից ու կատարող:Նաարդեն պատկերացում ունի դրանց վերաբերյալ և մեծ սիրով ու որևորությամբ մասնակցում է այդ հանդիսություններին ,հաճախ էլ լրացումներով ու հիշեցումներով օգնում դաստիարակին:
Առանձնակի հետաքրքրությամբ են անցնում Սուրբ Ծնունդն ու Ամանորը,Զատիկը, Համբարձման տոնը,Վարդավառը:Եթե Սուչբ Ծննդի և Զատկի տոնակատարությունները մենք տոնում ենք մանկապարտեզում,ապա համբարձումն ու Վարդավառը անպայման կազմակերպվում են բնության գեղատեսիլ վայրերում:
Նախադպրոցական տարիքում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է,այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը,այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտական աշխատանքը կատարել եմ միջին Ա խմբում:Կիրառել եմ զրույցի մոտելը,աշխատել եմ ԽԻԿ համակարգով:Աշխատանքի թեման ընտրել եմ Ամանորը, քանի որ այն հրաշքներով,սպասումներով և երազանքներով լի տոն է :Պարապմունքի ժամանակ երեխաները ամրապնդեցին Ամանորի մասին գիտելիքները,այնուհետև կարճ մուլտֆիլմ դիտեցին <<Գրինչ>>_ի մասին:Մուլտֆիլմի հերոսը Գրինչն էր,ով ծնվել էր սովորականից երկու անգամ փոքր սրտով:Այդ էր պատճառը,որ նա ատում էր Սուրբ Ծնունդը :Նա այնքան էր ատում տոնը,որ ցանկանում էր ոչնչացնել այն:Մուլտֆիլմը դիտելու ժամանակ մեր հերոս Գրինչը գողանում է երեխաների տոնածառը և ամանորյա զարդարանքները : Այն ետ վերադարձնելու համար պահանջում էր ,որ երեխաները իր առաջարկած հեքիաթի բաց թողնված մտքերը շարունակեն:Երեխաների առաջ դրված էր դժվար առաջադրանք և եթե նրանք ուզում էին տոնել Ամանորը պետք է հաղթահարեին դժվարությունը:Եվ դա նրանց մոտ հաջողվեց:Աշխատանքի վերջում հասկացանք, որ,եթե չլիներ Ամանորը, չէր լինի հույսը, լավատեսությունը և հրաշքներին հավատալու կարողությունը:

Օրինակելի պարապմունք
Առարկան՝ Խոսքի զարգացում
Թեման՝ <<Ամանոր>>
Տեսակը՝զրույց
Դասի կառուցվածքը՝ԽԻԿ համակարգ
Դասի նպատակները՝

•Ծանոթացնել երեխաներին ձմռանն անցկացվող տոների հետ
•Զարգացնել երեխաների պատմություն հյուսելու ունակությունը
•Զարգացնել երեխաների կապակցված խոսքը,ձևավորել քերականորեն ճիշտ արտահայտվելու կարողությունները
•Զարգացնել գեղագիտական ճաշակը,պատկերավոր մտածողությունը,հիշողությունը,աշխատանքն ավարտին հասցնելու կարողությունը
•Հարստացնել բառապաշարը սառցե լեզվակներ,ձյունե ամրոց,բյուրեղյա կամուրջ,եղնիկներով լծված սահնակ բառակապակցություններով
•Դաստիարակել սեր և հետաքրքրություն տոների հանդեպ:
Անհրաժեշտ պարագաներ `Գրինչի մասին կարճ մուլտֆիլմ, ձմեռ պատկերող նկարներ,Ամանորին վերաբերող նկարներ,նախօրոք իրենց ձեռքով պատրաստված նամակներ Ձմեռ պապիկին:

Ընթացքը
Խթանման փուլ
Պարապմունքն սկսեցի բաց հարցերով՝
Դաստիարակ
-Տարվա ո՞ր եղանակն է հիմա:
Երեխաներ
-Տարվա եղանակը ձմեռ է:
Դաստիարակ
-Քանի՞ ամիս ունի ձմեռը:
Երեխաներ
-Ձմեռն ունի երեք ամիս ՝ դեկտեմբեր,հունվար,փետրվար:
Դաստիարակ
-Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունենում ձմռանը՝բնության մեջ :(Ազատ քննարկում)
-Ո՞րն է ձմռան ամենագեղեցիկ,կախարդական տոնը:
Երեխաներ
-Ձմռան ամենակախարդական տոնը Ամանորն է:
Դաստիարակ
-Ինչու՞ ենք այդ տոնն ամենից շատ սիրում:(Ազատ քննարկում)
-Ինչպե՞ս ենք պատրաստվում Ամանորին:(Ազատ քննարկում)
-Ի՞նչն ենք զարդարում Ամանորին:
Երեխաներ
-Ամանորին զարդարում ենք եղևնին:
Պատասխանները լսելուց հետո երեխաները դիտեցին 《Գրինչ》-ի մասին մուլտֆիլմը:

Իմաստի ընկալում
Մուլտֆիլմի ավարտից հետո հարցեր տվեցի երեխաներին:
-Ինչի՞ մասին էր մուլտֆիլմը:
-Ինչպիսի՞ն էր Գրինչը:
-Ի՞նչը ստիպեց Գրինչին,որ նա փոխվի:
Հարցերի պատասխանները լսելուց հետո ես երեխաներին տեղեկացրեցի, որ մուլտֆիլմ դիտելու ժամանակ Գրինչը մեզանից գողացել է մեր տոնածառը և

ամանորյա զարդարանքները:Նա մեր զարդարանքները կվերադարձնի այն ժամանակ, երբ մենք կկատարենք նրա պահանջը:
Ֆիզկուլտդադար՝ 《Մենք փաթիլներ ենք》
Դաստիարակ
-Երեխանե'ր, պատկերացրե',ք որ դուք թեթև ձյունիկներ եք:Հիմա,երբ կփչի քամին, դուք կդառ աք փաթիլներ և պտտվելով կթափվեք գետնին:

Հարց
Դաստիարակ
-Երեխաներ, ուզու՞մ եք վերադարձնենք մեր ամանորյա զարդարանքները և տրամադրությունը :
Երեխաների պատասխանները լսելուց հետո ասացի Գրինչի պահանջը:
Դաստիարակ
-Գրինչը մեզ տվել է Ձմեռ Պապիկի մասին հեքիաթ և պահանջել ,որ ավարտին հասցնենք միտքը:Հիմա ես ձեր համար կընթերցեմ հեքիաթը մաս առ մաս և մենք միասին կփորձենք ավարտել միտքը:
Հեքիաթ `Ձմեռ Պապի մասին
Դաստիարակ
- Լինում է,չի լինում մի Ձմեռ պապ է լինում:
-Որտե՞ղ էր ապրում նա:
Երեխաներ
-Ձմեռ պապը ապրում էր սառցե լեզվակների պալատում:
Դաստիարակ
Երեխաները նրան հրավիրել էին մանկապարտեզ իրենց տոնահանդեսին:
-Ինչպե՞ս հայտնեցին նրան այդ մասին
Երեխաներ
-Նամակ գրեցին:
Դաստիարակ
-Ձմեռ պապը կարդաց հրավերը և սկսեց ճանապարհի պատրաստություն տեսնել :
-Ի՞նչ վերցրեց իր հետ:
Երեխաներ
- Ձմեռ պապը նվերներ վերցրեց:
Դաստիարակ
-Նա նստեց եղնիկներով լծված իր սահնակը և ճամփա ընկավ հեռու՛, հեռու՛...
-Ի՞նչ ճանապարհներով անցավ :

Երեխաներ

-Ձմեռ պապն անցավ սառցեդաշտերով և ձնեբլուրների վրայով :

Դաստիարակ

-Երբ Ձմեռ պապը հասավ գետակի մոտ , տեսավ,որ կամուրջը կոտրված է:

-Ի՞նչ կարող է նա անել:

Երեխաներ

-Նա կարող էր կախարդական գավազանի օգնությամբ կամուրջը նորոգել:

Դաստիարակ

-Ձմեռ պապը կարող էր գետը թռչելով անցնել,սակայն կախարդական ձեռնափայտը տանն էր մոռացել: Կարող էր նա սառցե դաշտով անցնել,սակայն նվերների պարկը շատ ծանր էր,կարող էր խորտակել այն:Կարող էր գետը ցատկելով անցնել,սակայն Ձմեռ պապը շատ ծեր էր , կարող էր ջուրն ընկնել :Ձմեռ պապը նստեց գետի ափին և մտածեց, թե ինչպես վարվի:Հանկարծ լսեց,որ ինչ-որ մեկը կանչում է իրեն:Շուրջը նայեց՝մարդ չկար:Նա մտածեց. 《Գուցե գետի միջի՞ց են ձայն տալիս》:

-Ո՞վ է, տեսնես:

Երեխաներ

-Երևի ոսկե ձկնիկն է:

Դաստիարակ

-Ոսկե ձկնիկն է՛ր: 《Մի վշտանա, Ձմեռ պապ,ես քեզ կօգնեմ》:

-Ինչպե՞ս ձկնիկը օգնեց Ձմեռ պապիկին:

Երեխաներ

-Երևի ոսկե ձկնիկը բյուրեղյա կամուրջ կառուցեց:

Դաստիարակ

-Ձմեռ պապն շատ ուրախացավ և շնորհակալություն հայտնեց ձկնիկին Իսկ ձկնիկը նրան ասաց. 《Պետք չի'քո շնորհակալությունը ,ավելի լավ է,ինձ էլ տա'ր երեխաների հանդեսին》:Ձմեռ պապը համաձայնեց,սակայն ինչպե՞ս կարող է ձկնիկին հասցնել մանկապարտեզ:

Երեխաներ

-Երևի կոշիկի մեջ ջուր կլցնի և ոսկե ձկնիկին կդնի մեջը:

Դաստիարակ

-Ահա և Ձմեռ պապն ու ոսկե ձկնիկը մանկապարտեզ հասան:Երեխաները նրանց ուրախությամբ դիմավորեցին:Ձմեռ պապը բոլորին նվերներ բաժանեց,իսկ ձկնիկը կատարեց երեխաների ցանկությունները:Չէ՞ որ ձկնիկը սովորական չէր,այլ՝ կախարդական:

-Երեխանե'ր, եկե'ք մտածենք , թե ինչ խնդրե'նք ոսկե ձկնիկից:
Երեխաները պատմեցին իրենց երազանքների մասին :

Կշռադատման փուլ
Երբ հեքիաթը ավարտեցինք, Գրինչը
անձամբ եկավ ,շնորհակալություն հայտնեց և վերադարձրեց մեր տոնածառն ու ամանորյա զարդարանքը: Երեխաները շատ ուրախացան և շնորհակալություն հայտնեցին Գրինչին: Գրինչն էլ խոստացավ,որ այլևս չի գողանա ամանորյա հրաշքները:
Օրվա երկրորդ կեսին այցելեցինք հայ փոստ և երեխաների ձեռքով նախօրոք պատրաստված նամակները ուղարկեցինք Ձմեռ պապիկին:

1. Դիտարկող-Տնօրեն -Այս բաց պարապմունքի միջոցով,երեխաները ամրապնդեցին Ամանորի մասին գիտելիքները:Պարապմունքի ժամանակ երեխաները շատ ոգևորված էին և տիրում էր աշխույժ մթնոլորտ:
2.Դիտարկող-Մեթոդիստ - Կար հետադարձ կապ երեխաների և դաստիարակի միջև: Երեխաները շատ ակտիվ էին և կարողացան պատասխանել հարցերին:
3.Դիտարկող-Դաստիարակ- Երեխաները դեռ մանուկ հասակից պետք է պատկերացումներ կազեն Ամանորի մասին, հասկանան, ինչու ենք նշում այդ տոնը և հավատք ունենան հրաշքների նկատմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, մենք խոսեցինք Ազգային տոների,ծեսերի

կազմակերպման առանձնահատկությունների դերի մասին կրթական գործում:Եվ աշխատանքը կատարելու ընթացքում հասկացա, թե որքան կարևոր են տոներն ու ծեսերը հասարակության և հատկապես երեխաների կյանքում:
Ես նպատակ էի դրել,որ երեխաները սկսած մանկապարտեզից հասկանան իրենց երկիի և հայ ժողովրդի ազգային տոների և ծեսերի իմաստը: Յուրաքանչյուր պարապմունքի ավարտից հետո ես հասա իմ նպատակին:
Դաստիարակներին խորհուրդ կտամ պարապմունքների միջոցով երեխաներին ծանոթացնել մեր ազգային տոներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լալա Սմբատյան 《Նախաշավիղ》 2010.5.
2. Լալա Սմբատյան 《Տոնական ղողանջներ》
3. https://www.armgeo.am/arcient-armeninan-holidays/

4. https://www.marinemkrtchyan.Worolpress.com

5.https://hy.m.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%80

6. https://www.fyca.net/tonacuyc/trndez?lang=hy